Հավելված N 2
2025 թվականի հունվարի հունվարի «15»-կնքված «1032-11002/2025-ԾԿ» պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N1

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» (Գյումրի 1) |
| Դրամաշնորհի N | «1032-11002/2025-ԾԿ» |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 03.01.2025 - 31.12.2025 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2025 - 30.06.2025 |
| Ներկայացման օր | 11.07.2025 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգար Կարապետյան, ծրագրի ղեկավար |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորված գործողություններն են.

1) կենցաղային սպասարկում
2) բժշկական օգնություն և սպասարկում
3) սոցիալ-հոգեբանական օգնություն
4) խորհրդատվության օգնություն
5) Լվացքատան ծառայություն
6) սննդի, հիգիենիկ պարագաների և առաջին օգնության դեղորայքի տրամադրում
7) Շահառուների կոմունալ վարձավճարների փոխհատուցում ձմռան ամիսներին՝ ապահովելով տաք ձմեռ նրանց համար:

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացը՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

**<u>Սոցիալ-հոգեբանական աջակցություն և խորհրդատվություն</u>**

Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատակիցների կողմից իրականացվել է ծրագրում ներգրավված 100 շահառուների կարիքի վերագնահատում՝ կիրառվելով կազմակերպության կողմից մշակված կարիքի վերագնահատման ձևաթուղթը: Վերագնահատված կարիքներին և Անհատական սոցիալական ծրագրերին համապատասխան իրականացվում է շահառուի խնամքը:

Սոցիալական աշխատակիցները մշտապես շահառուների կողքին են ցանկացած թղթաբանություն կազմակերպելու կամ սոցիալական ոլորտին առնչվող խորհրդատվություն ստանալու կարիքի դեպքում: Դեղորայքի ստացման համար սոցիալական աշխատողների կողմից կատարվել է շահառուների անապահովության միավորի տեղեկանքի ստացում, որով բուժքույրերը դեղատներից ստացել են պետության կողմից հատկացվող անվճար դեղորայքը(ապրիլ, մայիս)՝ ըստ դեղատոմսերի: Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողի կողմից կատարվել է շուրջ 12 շահառուի ուղեկցում ՄՍԾ, փաստագրում անապահովության գնահատման համակարգում: Կատարվել է նաև շահառուների ուղղորդում կամ ուղեկցում համայնքապետարան, մարզպետարան կամ այլ պետական կառույցներ, օժանդակութուն աջակցության դիմումների լրացման գործում:

*Շահառուների սոցիալական խնդիրները լուծումներ են ստանում համապատասխան ծառայությունների տրամադրման, խորհրդատվությունների, միջնորդական ծառայությունների կամ անմիջական օգնության միջոցով:*

Շահառուի հետ կնքված պայմանագրին, ծառայությունների մատուցման ժամանակացույցին և անհատական սոցիալական ծրագրին համապատասխան իրականացվել են խնամքի ծառայությունների տրամադրում ևս, մասնավորապես՝

**<u>Կենցաղային սպասարկում</u>**

Շահառուներին տրամադրվել է սոցիալական խնամողի ծառայություններ, ով տնայցերի ընթացքում իրականացրել է շահառուի խնամք, տան մաքրում, շահառուի լողացում, մազերի և եղունգների հարդարում, անկողնային պարագաների փոխում, հագուստի փոխում, գնումներ, կոմունալ վճարումներ:

Հաշվետու ամիսներին սոցիալական խնամողների կողմից կատարվել է կենցաղային սպասարկում՝ ըստ պետական չափորոշիչների: Ա խմբի շահառուներին սոցիալական խնամողները կատարել են ամենօրյա այցեր, իսկ Բ խմբի շահառուներին՝ շաբաթական 2-ական այցեր՝նախապես կազմված գրաֆիկների հիման վրա: Ըստ շահառուի կարիքի և տարբեր իրավիճակների՝ իրականացվել են նաև հավելյալ այցեր:

Հաշվետու ժամանակահատվածում գործել է նաև **լվացքատունը**, որտեղ լվացվել, արդուկվել են շահառուների հագուստները և հատկացվել վերջիններիս: Այն շահառուները, ովքեր իրենց բնակարաններում ունեն լվացքի մեքենաներ, սոցիալական խնամողները լվացքը հագուստները լվացել են շահառուի բնակարանում

*103 շահառուներն ապահովված են կենցաղային սպասարկման, հիգիենայի պահպանման ծառայություններով՝ ըստ անհրաժեշտության: Լվացքի, լոգանքի, տան մաքրության ծառայությունների շնորհիվ բարելավված է շահառուների հիգիենիկ վիճակը: Գնումների և կոմունալ վճարների շնորհիվ շահառուն ապահոված է իրեն անհրաժեշտ ապրանքներով և կոմունալ ծառայություններով, որի իրականցման կատարողականը ամրագրվում է ծառայությունների մատուցման ստուգաթերթում և շահառուի ստորագրությամբ՝ շահառուի մոտ գտնվող ծառայությունների տնային թերթիկում:*

**<u>Բժշկական օգնություն և սպասարկում</u>**

Բուժքույրն իրականացրել է տնայցեր շահառուներին, որի ընթացքում ստուգվել է առողջական վիճակը, իրականացվել է արյան ճնշման, արյան մեջ շաքարի մակարդակի չափում, ըստ անհրաժեշտության կատարվել են ներարկումներ, անհրաժեշտության դեպքում վերքերի և վնասված հատվածների մշակում և վիրակապում, տրամադրվել է բուժման, ինչպես նաև դեղերի օգտագործման վերաբերյալ խորհրդատվություն՝ ընտանեկան բժշկի հետ համագործակցությամբ: Կատարվել է ուղղորդում դեպի պոլիկլինիկաներ առավել բարդ հետազոտությունների կատարման

համար: Բուժքույրը խորհրդատվություն է տրամադրել նաև շահառուներին և նրանց օգնող անձանց՝ առողջապահական թեմաների շուրջ: Բուժքույրերը մշտական կապի մեջ են եղել շահառուների թաղամասային բժիշկների հետ, ստացել են պետության կողմից հատկացվող դեղորայքը:
Բուժքրոջ կողմից իրականացվել են այցելություններ Ա խմբի շահառուներին շաբաթական առնվազն 2 անգամ և Բ խմբի շահառուներին՝ շաբաթական առնվազն 1 անգամ: Ըստ շահառուի կարիքի և տարբեր իրավիճակների՝ իրականացվել են նաև հավելյալ այցեր:
Այցերի և մատուցված ծառայությունների վերաբերյալ կատարվել են նշումներ ծառայությունների մատուցման ստուգաթերթում, ինչպես նաև շահառուի բնակարանում գտնվող ծառայությունների մատուցման տնային թերթիկում: *Տրամադրված կանոնավոր բժշկական օգնության, առողջապահական ծառայությունների, դեղամիջոցների տրամադրման և բուժքույրերի հետևողականության շնորհիվ պահպանված և բարելավված է շահառուների կայուն առողջական վիճակը:*

<u>*Մշակութային միջոցառման կազմակերպում*</u>

Գյումրու «Էմիլի Արնգակ» կենտրոնում կազմակերպվեց ծառատունկ՝ Ծրագրի աշխատակիցների և տարեց շահառուների մասնակցությամբ:
Չնայած ծառատունկին մասնակցելու համար հրավիրել էինք 20 շահառու, բայց առողջական խնդիրների և տեղաշարժման դժվարությունների պատճառով միայն 8-ը (4իգ, 4ար) կարողացան մասնակցել:
Նախաձեռնության նպատակն էր խթանել շահառուների մասնակցային ներգրավվածությունը Ծրագրի շրջանակներում կազմակերպվող տարբեր միջոցառումներին, ինչպես նաև ապահովել նրանց ակտիվ մասնակցությունն ու ինտեգրումը բնապահպանական նախաձեռնությունների մեջ:
Միջոցառման ընթացքում շահառուները Ծրագրի աշխատակիցների օգնությամբ կենտրոնի հարակից տարածքում տնկեցին մի քանի ծառատեսակներ, յուրաքանչյուր ծառի վրա տեղադրվեց համապատասխան նշան՝ շահառուի անուն-ազգանունով՝ խորհրդանշելով նրանց անհատական ներդրումը բնապահպանական նախաձեռնությանը, այնուհետև շահառուները լուսանկարվեցին իրենց անվանական ծառերի կողքին: Ծառատունկին հաջորդեց մասնակիցների համար կազմակերպված հյուրասիրություն, որի ընթացքում նրանք ջերմ ու անկեղծ զրույց ունեցան միմյանց հետ:
Ծրագրի շրջանակներում՝ գեղեցիկ և ոգեշնչող միջավայրում՝ Վանաձորի «Աստերի» սրճարանում, տեղի ունեցավ խոհարարական համագործակցության ջերմ միջոցառում: Միջոցառմանը մասնակցում էին Գյումրիից 5 շահառուներ, Վանաձորից 10 շահառուներ և «Սաբինե» փոքր խմբով տան 7 երեխաները :
Միջոցառման հիմնական նպատակը սերունդների միջև հաղորդակցության կամուրջներ ստեղծելն էր՝ խթանելով փոխըմբռնումը, փոխադարձ հարգանքը և հոգատարության մթնոլորտի ձևավորումը:
Մասնակիցները բաժանվել էին խմբերի, որոնցից յուրաքանչյուրն ինքնատիպ մոտեցմամբ էր պատրաստում ընտրված ուտեստները: Երեխաներն ու տարեցները՝ խոհարարների մասնագիտական աջակցությամբ, համատեղ պատրաստում էին կերակուրները՝ սիրով հունցելով, համեմելով և ձևավորելով յուրօրինակ ստեղծագործություններ:
Երբ ուտեստները պատրաստ էին, բոլոր մասնակիցները նստեցին մեկ սեղանի շուրջ՝ համտեսելու իրենց համատեղ աշխատանքի արդյունքը: Տարեց մասնակիցները սիրով կիսվում էին իրենց խոհարարական փորձով, իսկ երեխաները՝ մեծ հետաքրքրությամբ ու հարգանքով ունկնդրում էին նրանց՝ ձեռք բերելով ոչ միայն խոհարարական հմտություններ, այլև մարդկային խոր արժեքներ:
Միջոցառումը հատկապես կարևոր էր տարեցների համար՝ խթանելով նրանց սոցիալական

ակտիվությունը, ուժեղացնելով միջսերունդային կապերը և նպաստելով դրական հույզերի ձևավորմանը:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են շաբաթական աշխատանքային հանդիպում-քննարկումներ, որոնց ժամանակ ամփոփվել են կատարված աշխատանքները, առաջացած հրատապ խնդիրները և պլանավորվել հաջորդ շաբաթվա անելիքները:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid02iZXMyH87xm2mRybXwsA7NgPZD9Q5fscAkw8DkaeszjXx2DXdvDPJWYYGJUHx2R4vl?rdid=YbVnEhR9U9c5N9eF#

https://www.facebook.com/margar.karapetyan/posts/pfbid0um7AMyBmLbk82Xa75iLyTsbtzEKhvTzYcSRxeFonykAzi2zSLrwGMzSLgNe6P94Ll?rdid=w9oCnBs7o0yuBc5L#

https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0w9A6XHmTzRhWfUjdQsQTzV7unPChktPXw8i2u8apP4gmm3Y5V9N1BMAaE7WpQxcZl?rdid=0lj16njRRmXqMedl#

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

Շահառուների գերակշիռ մասը, առողջական վիճակով պայմանավորված, չի կարողանում մասնակցել մշակութային միջոցառումներին:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Ծրագրի հաջորդ եռամսյակում պլանավորվում է շարունակել ծրագրով նախատեսված բոլոր գործողությունները, մասնավորապես.

1) կենցաղային սպասարկում
2) բժշկական օգնություն և սպասարկում
3) սոցիալ-հոգեբանական օգնություն
4) խորհրդատվության օգնություն
5) Լվացքատան ծառայություն
6) Առաջին օգնության դեղորայքի տրամադրում:

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:

1. **Մարտ-ապրիլ 31.03-23.04** – Իրականացվել են 18-ժամյա դասընթացներ «Գյումրու պետական բժշկական քոլեջի» «Քույրական գործ» մասնագիտության ուսանողների համար: Դասընթացները վարել են «Տնային խնամք» ծրագրի բուժքույրերը և ներառել ինչպես տեսական, այնպես էլ գործնական պարապմունքներ: Դասընթացի մասնակիցները հնարավորություն են ստացել շահառուների բնակարաններում անցնել պրակտիկա՝ ստացած գիտելիքները առավել ամրապնդելու համար:

2. **Մայիս 12-16** –5-օրյա դասընթաց կազմակերպվեց Ծրագրի սոցիալական խնամողների համար: Դասընթացի թեման Բոքաթ խնամքն էր: Դասընթացը վարեցին Ծրագրի բուժքույրերը:
3. **Մայիս 26-27-** Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից անցկացվեց երկօրյա կլոր-սեղան քննարկում, որին մասնակցեց Ծրագրի սոցիալական աշխատողը: Քննարկման շրջանակում ներկայացվեցին սոցիալական աջակցության ոլորտի նոր բարեփոխումներն՝ մասնավորապես սոցիալական աջակցության օրենքն ու դրա շրջանակում իրականացվող ռազմավարական փոփոխությունները, անապահովության գնահատման նոր համակարգը, սոցիալական աշխատողի դերի բարձրացմանն ուղղված աշխատանքներն ու այլ հարցեր: Ինչպես նաև քննարկումների ընթացքում մասնակիցները խոսեցին պետություն-հասարակական կազմակերպություններ գործողությունների համակարգման, ուղղորդումների մեխանիզմների, համագործակցության արդյունքների և անելիքների, ինչպես նաև մասնագիտական այրման կանխարգելման մեխանիզմների ու մեթոդների մասին:
4. **Մայիս 27**-տեղի ունեցավ տարեցների ցանցի ժողով, որին մասնակցեց նաև Ծրագրի ղեկավարը: Հանդիպման ընթացքում ցանցի անդամ կազմակերպություններին ներկայացվեց առաջարկ՝ վերանայել տնային պայմաններում տարեցների խնամքի մոդելի չափորոշիչները և վերամշակված տարբերակը ներկայացնել պետությանը՝ այն որպես պետականորեն ընդունելի ձևանմուշ հաստատելու նպատակով: Այս քայլը հնարավորություն կտա տնային խնամքի ծառայություններ մատուցող այլ կառույցներին օգտագործել այդ մոդելը՝ որպես ուղեցույց իրենց ծրագրերի և գործողությունների պլանավորման գործընթացում:
5. **Հունիս 19-20-** Գյումրու տնային խնամքի ծրագրի գրասենյակում անցկացվեց երկօրյա վերապատրաստում «Գործընկերություն հանուն Սյունիքի. բարելավված համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի շրջանակում: Վերապատրաստմանը մասնակցեցին Սյունիքի մարզում գործող և տնային խնամքի ծառայություններ մատուցող թիրախային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Դասընթացը իրականացվեց գործնական ձևաչափով՝ շեշտադրելով հմտությունների կիրառումը իրական իրավիճակներում: Մասնակիցները ձեռք բերեցին կարևոր գիտելիքներ անկողնային շահառուների խնամքի վերաբերյալ՝ ներառյալ հիգիենայի ապահովումը, սննդի կազմակերպումը, մաշկի վնասումներից խուսափելու եղանակները, խնամքի միջոցների ճիշտ կիրառումը, ինչպես նաև խնամողի և խնամվողի միջև հաղորդակցության բարելավումը: Գործնական վարժությունների ընթացքում նրանք հնարավորություն ունեցան կիրառել տեսական գիտելիքները և ստանալ մասնագիտական խորհրդատվություն:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան | Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան |
| ______________________ | ______________________ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Ձևաչափ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 103/100 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 78 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 11 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 9 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 11 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 89 |
| 1.4 | այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձինք | 1 |
| 1.4.1 | այդ թվում՝ կին | 1 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա -11<br>Բ -89 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 100 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 100 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 100 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 23 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 111 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) լվացքի կազմակերպում | 23 |

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան

«11» հուլիս 2025թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան

---------------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան

---------------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ «Armenian Caritas» Benevolent NGO 06514397